

	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	11RBD PL 72-03-01
Ֆիզիկական անձանց վարկավորման պայմաններ	Խմբագրություն 54	
	Ուժի մեջ է՝ 01.08.2022թ-ից	
4.3 Առանց Բանկ այցելության՝ առաջնային շուկայից տրանսպորտային միջոցի ձեռքբերման սպառողական վարկ¹		
Նպատակ	Առաջնային շուկայից (ավտոսրահից) նոր տրանսպորտային միջոցի ձեռքբերման նպատակով վարկ՝ առանց Բանկ այցելելու:	
Հաճախորդի (համավարկառուի/երաշխավորի) տարիք	18-65 տարեկան, պայմանով, որ վարկային պայմանագրի ժամկետի ավարտին վարկառուի տարիքը չի գերազանցի 65 տարեկանը	
Ռեզիդենտություն	ՀՀ քաղաքացիություն ունեցող և չունեցող ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք	
Արժույթ	ՀՀ դրամ	
Վարկավորման նվազագույն և առավելագույն սահմանաչափ	3 մլն - 20 մլն ՀՀ դրամ	
Ժամկետ (ամիս)	84 ամիս	
Տարեկան անվանական տոկոսադրույք ներառյալ գույքի ապահովագրությունը	Ճշգրտվող հաստատուն տոկոսադրույքով (տոկոսադրույքը կարող է փոփոխվել սկսած 37-րդ ամսվանից)	
	Հաստատուն բաղադրիչ՝ 7.4%	
	+ փոփոխուն բաղադրիչ (բազային տոկոսադրույք)	
	https://www.ameriabank.am/content.aspx?id=base_information&page=99&itm=retail+1.1&lang=33/	
Տարեկան փաստացի տոկոսադրույք ներառյալ գույքի ապահովագրությունը	17.1-17.13%	
Վարկի տրամադրման միանվագ վճար	Չի սահմանվում	
Նվազագույն կանխավճար	Չեք բերվող տրանսպորտային միջոցի արժեքի առնվազն 10%-ի չափով	
Մարման եղանակ	Անուիտետային (վարկի գումարի և տոկոսագումարի հանրագումարը վճարվում է հավասարաչափ ամսական պարբերականությամբ)	
Գրավադրվող գույքի նկարագրություն	Գրավի առարկա է հանդիսանում ձեռքբերվող տրանսպորտային միջոցը	
Վարկ/գրավ հարաբերակցություն	Չեք բերվող տրանսպորտային միջոցի առավաճառքի արժեքի 90% չափով	
Գրավադրվող տրանսպորտային միջոցի տվյալներ	Ավտոսրահից ձեռք բերվող (չհաշվառված) տրանսպորտային միջոց	
Գրավադրվող գույքի գնահատում	Ավտոսրահից ձեռքբերվող Տրանսպորտային միջոցի գնահատում չի իրականացվում: Որպես գրավադրման արժեք հիմք է ընդունվում ավտոմեքենա իրացնող ընկերության կողմից Բանկին պատկանող էլեկտրոնային համակարգում նշված արժեքը/առուվաճառքի արժեքը:	
Գրավադրվող Գույքի ապահովագրություն	Գրավադրվող տրանսպորտային միջոցների ապահովագրությունն իրականացվում է ամբողջ ժամկետի ընթացքում Բանկի կողմից վարկի մնացորդի չափով:	
Վարկի ձևակերպման վայր	Ավտոսրահ	
Պահանջվող փաստաթղթեր	Վարկային հայտը լրացնելիս պահանջվող փաստաթղթեր	
	Անձը հաստատող փաստաթուղթ, ՀՕՀ	
	Վարկը հաստատելուց հետո պահանջվող փաստաթղթեր	
	Ամուսնության վկայական (առկայության դեպքում) և ամուսնու անձը հաստատող փաստաթուղթ, ՀՕՀ	
	Տրանսպորտային միջոցի գրավի իրավունքի գրանցման վկայական (Բանկին փոխանցվում է ՀՀ ճանապարհային ոստիկանության կողմից)	
	Այլ փաստաթղթեր անհրաժեշտության դեպքում	
Վարկի վաղաժամկետ մարում	Վարկի լրիվ կամ մասնակի վաղաժամկետ մարման դեպքում վարկի վաղաժամկետ մարման գումար չի վճարվում:	
Տույժեր և տուգանքներ ժամկետանց մայր գումարի և տոկոսի նկատմամբ	Ժամկետանց վարկի նկատմամբ շարունակում է Պայմանագրով նախատեսված տոկոսի հաշվարկումը: Տույժ ժամկետանց Վարկի և Տոկոսադրումարի 0.13 %-ի չափով կետանցի յուրաքանչյուր օրվա համար:	
Հաճախորդի կողմից կատարվող լրացուցիչ վճարներ	Պայմանագրերից ծագող իրավունքների (ավտոմեքենայի ձեռքբերման և գրավադրման) պետական իրավասու մարմնում գրանցման վճարներ	
Ավտոսրահի և Բանկի միջև համագործակցության դրույթներ	Ավտոսրահի հետ համագործակցության շրջանակներում կարող են սահմանվել այլ պայմաններ, ներառյալ՝ տարեկան տոկոսադրույք, կանխավճարի նվազագույն չափ, վարկ/գրավ հարաբերակցություն և այլն:	

¹ Բանկի և Ավտոսրահի միջև համագործակցության պայմանագրի առկայությունը պարտադիր է:

ՀՀ օրենսդրության համաձայն Հաճախորդի կողմից միակողմանի նախաձեռնությամբ իր հաղորդակցման միջոցը փոփոխելու վերաբերյալ գրավոր դիմում Բանկ ներկայացնելու դեպքում, Բանկն իրավունք ունի փոփոխված հաղորդակցման միջոցը կիրառել նաև հաճախորդի գրավոր դիմումը ստանալուց մինչև 30-օրյա ժամկետը լրանալն իրականացվող հաղորդակցման նկատմամբ: Ընդ որում, հաղորդակցման միջոցի տարեկան մեկ անգամից ավելի փոփոխությունները կատարվում են Բանկի համաձայնությամբ՝ Բանկի ներքին իրավական ակտերով և սակագներով սահմանված պայմանների պահպանմամբ: